ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1957 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գ. Ագճավուրյան

Ե. ՉԱՐԵՆՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԹՎԵՐ

Եղիշե Չարենցի ծննդյան 60-ամյա հոբելյանը առիթ է ի հայտ բերելու այն բոլոր վավերագրերը, համապատասխան կազմակերպությունների և վերադաս օրգանների որոշումները, որոնք առնչվում են գրողի կյանքին ու գործունեությանը, լրացնում մինչև այժմ եղած որոշ թերին:

Գրականության և արվեստի թանգարանում պահպանվող Չարենցի ֆոնդից բացի, բավականաչափ նյութեր են պահպանվել ՀՊԳՄ Ասոցիացիայի ֆոնդում. այդ նյութերը վերաբերում են Չարենցի գործունեության 1922—35 թվականներին:

Նախքան այդ փաստերի թվարկումը, հարկ ենք համարում տալ մի այլ վավերագիր, որը վերջերս ձեռք է բերել թանգարանի դիրեկցիան:

Երևանի դրամատիկական ստուդիայի
վարիչ ընկ. Վարդան Միրզոյանին.

Հ. Ս. Խ. Հ.
Լուսավորության Ժողովրդական
Կոմիսարիատ
№ 239
30 դեկտեմբ. 1920 թ.
Երևան

Լուս. Ժող. Կոմիսարի կարգադրությամբ հայտնում ենք ի կարգադրություն, որ Ձեր ղեկավարության ներքո գտնվող դրամատիկական ստուդիան առաջիկա թվի հունվարի մեկից պետականացվում է և որպես դրամատիկական ստուդիա, դրվում է Երևանի Գավառական Հեղկոմի իրավասության ներքո:

Առաջարկում ենք դրամատիկական ստուդիայի գույքն ու գործերը հանձնել Երևանի Գավառական Հեղկոմի կրթական բաժանմունքին և այդ մասին հայտնել մեզ ի գիտություն:

Արվեստի բաժնի վարիչ՝ Եղիշե Չարենց
Իտ. քարտուղար՝ Ա. Կարապետյան

Ասոցիացիայի ֆոնդում եղած Չարենցին վերաբերող նյութերից նպատակահարմար ենք համարում ժամանակագրական կարգով համառոտակի տալ հետևյալները.

1) Երևի դեկլարացիայի ձեռագիր օրինակը (տպագրված է «Խորհրդային Հայաստան», № 130, 1922 թ.):

2) Ցուցակ, որից պարզվում է, որ Չարենցը ՀՊԳՄ մեջ է մտել 1925 թ. (գրողների միության տոմս, № 25):

3) 1928 թ. փետրվարի 12-ի ԽՀԳՄ կենտվարչության կոմֆրակցիայի նիստի որոշումը, որով Չարենցը մացվում է կենտվարչության կազմում և ներկայացվում հերթական պլենումի հաստատմանը:

4) 1928 թ. հունիսի 12-ին նույն կազմակերպության նիստում Չարենցն ընտրվում է «Գրական դիրքերում»-ի խմբագրական կոլեգիայի անդամ:

5) 1928 թ. սեպտեմբերի 30-ին քննարկվում է Գրական ստուդիայի բացման և գործունեության հարցը:

սաբաշիման խնդիրը. որոշվում է ստուդիայում պոետիկայի ժամերը հատկացնել Չարենցին

6) 1928 թ. դեկտեմբերի 1-ի ՀԿ(բ)Կ բարտուղարության № 1 արձանագրության քաղվածքը՝ ՀՊԳ Ասոցիացիայի դեկավար օրգանների մասին, որով հաստատվում է Վարչության կազմը 11 հոգուց, այդ թվում Չարենցը:

7) 1930 թ. մայիսի 25-ին Պրոլետգրողների Երևանի կազմակերպության ժողովում Չարենցը դեկուցում է Պետհրատի 1930 թ. գեղարվեստական գրականության հրատարակչական պլանի և այլ կարևոր խնդիրների մասին: Ժողովը ողջունում է Չարենցի նախաձեռնությունը և գոհունակությամբ նշում, որ հատուկ ուշադրություն է նվիրված ռուս, հայ, վրացի և աղրբեջանական կլասիկ ժառանգության և պրոլետգրողների ստեղծագործության հրատարակության ընդլայնման խնդրին:

8) Հայկինոյի ինֆորմացիոն բյուլետենում նշվում է, որ 1931 թ. պլանի մեջ մտել են մի շարք լիամետրաժ սցենարներ, այդ թվում Չարենցի «Ապստամբություն» սցենարը, որի նյութն առնված է Հայաստանի քաղաքացիական կռիվների շրջանից.

Սցենարը, որից Չարենցի ֆոնդում պահպանվել են մի քանի սեպագիր ֆրագմենտներ, գրված է «Երկիր Նաիրի» և «Խմբապետ Շավարշ»-ի ստեղծագործությունների հիման վրա:

9) 1931 թ. մայիսի 15-ին Չարենցը որպես Պետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչ, ուղարկում է ՀՊԳ Ասոցիացիային մի գրություն, որով Վրաստանի Պետհրատին ներկայացնելու համար պահանջում է համապատասխան գրական գործեր՝ վրացերեն լեզվով հրատարակելու նպատակով:

10) 1931 թ. սեպտեմբերի 19-ին Ասոցիացիայի բարտուղարությունը Չարենցին և մի քանի այլ գրողների ընտրում է Լենինականի ուսուցչական կոնֆերանսի պատգամավոր:

11) 1931 թ. սեպտեմբերի 25-ին Չարենցն ընտրվում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի կողմից կազմակերպելիք ԽՍՀՄ ազգությունների գրականության ցուցահանդեսի կազմակերպիչ հանձնաժողովի անդամ (հանձնաժողովի կազմումն են եղել Դ. Դեմիրճյանը, Վ. Թոթովենցը, Վ. Ալազանը և ուրիշներ):

12) Այդ նույն ժողովում Չարենցն ընտրվում է ՀԽԳ ֆեդերացիայի երկրորդ բարտուղար:

13) 1932 թ. օգոստոսի 26-ին ԽՀԳՄ կազմակերպության հանձնաժողովի նիստում, Չարենցը դեկուցում է Պետհրատի 1933 թ. գեղարվեստական գրականության հրատարակչական պլանի մասին, կանգ է առնում մի շարք կոնկրետ խնդիրների վրա՝ եղած հրատարակչական գործը բարելավելու նպատակով.

14) 1932 թ. սեպտեմբերի 9-ին Չարենցը ընտրվում է գրողների կենցաղը բարելավող հանձնաժողովի անդամ:

15) 1932 թ. սեպտեմբերի 9-ի ՀԽԳՄ գրությունը Չարենցին, որով հայտնվում է, որ նրա նախագահությամբ առանձնացվել է հանձնաժողով Մ. Գորկու գրական 40-ամյա հոբելյանը Հայաստանում նախապատրաստելու համար: Չարենցին առաջարկվում է ներկայացնել աշխատանքի ծրագիր և համապատասխան առաջարկներ հոբելյանը պատշաճ ձևով նշելու համար:

16) 1933 թ. հուլիսի 20-ի Չարենցի նամակը ՀԽԳՄ կազմկոմիտեին: Նամակից պարզվում է, որ 1932 թ. Պետհրատը Չարենցին առաջարկել է կազմել և խմբագրել Հ. Թումանյանի երկերի լիակատար ժողովածուն: Չարենցը հանձն է առել այդ. հայտնում է, թե ինչպես է աշխատել ինքը Թումանյանի հրատարակության վրա. խմբագիրը նշում է. «Հաճախ մի ը-ի կամ սոորակետի համար ես ստուգել եմ մի քանի վարիանտներ, ինչպես անտիպ, այնպես էլ տպված»:

Նամակը պատկերացում է տալիս, թե ինչպես է ըմբռնել Չարենցը կազմողի և խմբագրողի պարտականությունները (Չարենցի խմբագրությամբ Թումանյանի ժողովածուն լույս է տեսել 1934 թ.):

17) 1934 թ. հունվարի 14-ին ԽԳՄ կազմկոմիտեի բարտուղարությունը որոշում է ընդունում գրականության և դրամատուրգիայի մասին դեկուցումներ կարդալ Լենինականի հասարակության համար: Զեկուցողների ցանկում է նաև Չարենցը:

18) 1934 թ. փետրվարի 8-ին Գրողների Կազմկոմիտեն գիմում է մի շարք բանաստեղծների՝ այդ թվում և Չարենցին, խնդրում շտապ կարգով գրել գարնանացանին նվիրված երգերի տեքստերը:

19) 1934 թ. հունիսի 14-ին Չարենցի դիմումը ՀԽԳՄ կազմկոմիտեին, իրեն Միության մեջ ընդունելու մասին։

20) 1934 թ. նոյեմբերի 1-ի ՀԽԳՄ վարչության նիստը որոշում է մի շարք գրողների՝ նաև Չարենցին հանձնարարել մասնակցելու երկաթուղում կազմակերպվելիք գրողների ոեյդին։

21) ա) 1934 թ. դեկտեմբերի 23-ի ԽԳՄ վարչության նիստը որոշում է „Литературный критик" ամսագրի համար գրել հոդվածներ, ինչպես հայ կլասիկների, այնպես էլ սովետահայ առաջավոր գրողների՝ այդ թվում և Չարենցի մասին։

բ) Տարբեր հիմնարկներին և կազմակերպություններին կից կազմակերպել գրական խմբակներ, ամրացնելով դրանց սովետահայ գրողներին։ Չարենցը կցվում է Գրողների տան խմբակին.

21) 1934 թ. դեկտեմբերի 29-ին ՀԽԳՄ կազմկոմիտեի քարտուղարության նիստում Միության աշխատանքի եռամսյա ծրագրի համաձայն, որոշվում է Ղամարլուի (Ներկայիս Արտաշատ) քաղաքացիական կռիվների պատմությունը գրելու համար կազմել գլխավոր խմբագրական հանձնաժողով։ Չարենցը հանձնաժողովի կազմի մեջ է։ Նույն նիստում որոշվում է քննարկել «Դիրք ճանապարհ»-ի ժողովածուն։

Բացի մերոնիշյալ փաստերից, Ասոցիացիայի ֆոնդում պահպանվել են նաև Չարենցին ուղղված այլ գրություններ, փաստաթղթեր, որոնք Չարենցի գործունեությունը լուսաբանում են բազմազան կողմերով։